

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի կողմից 2014թ. կատարված աշխատանքների մասին

Հանրային իրազեկումը Վայոց ձորի մարզպետարանի աշխատանքային ծրագրի մաս է կազմում և կոչված է հիմնականում լուսաբանելու այդ ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումները, գործընթացները և դրանց արդյունքում սպասվող ակնկալիքներն ու ձեռքբերումները:

2014 թվականի հունվար դեկտեմբեր ամիսներին մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը ղեկավարվելով բաժնի կանոնադրությամբ և բաժնին վերապահված գործառույթների, ինչպես նաև քաղաքացիական ծառայողների պաշտոնի անձնագրի պահանջներով՝ հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները.

**ՏԵՂԵՎԱՏՎՈՒԹՅՈՒՆ** ԱՅԼ ԿԱՅՔԵՐՈՎ ԵՎ ԶԼՄ-ՆԵՐՈՎ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվետու ժամանակահատվածում Վայոց ձորի մարզպետի և մարզպետարանի աշխատանքային գործունեության հանրային իրազեկումը մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնի կողմից իրականացվել է «Միասնական տեղեկատվական հարթակ»-ի, մարզային «Վարդաձոր», «ԱգրոԿամուրջ» ամսաթերթի, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի, հանրային հեռուստաընկերության «Հայլուր» լրատվական ծրագրի միջոցով:

**ՏԵՂԵՎԱՏՎՈՒԹՅՈՒՆ** ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՅՔԷԶԻ <ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ> ԲԱԺՆՈՒՄ ՏԵՂԱԴՐՎԱԾ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ

Մարզպետի գործունեության հրապարակայնությանն են ուղղված եղել նաև պաշտոնական կայքի «Նորություններ» բաժնի նյութերը: 2014թ. ընթացքում մարզպետարանի պաշտոնական կայքի «Նորություններ» բաժնում տեղադրվել են 425 լուսաբանական նյութեր, որոնք լրատվական բնույթի հաղորդումներ են:

Դրանք արտացոլել են մարզպետի աշխատանքային գործունեությունը, մարզպետի՝ մարզի տարբեր համայնքներում կատարած աշխատանքային այցերը, մարզպետի կողմից քաղաքացիների ընդունելությունները, մարզի համայնքներում առկա սոցիալ-տնտեսական իրավիճակը, տարբեր հիմնախնդիրների վերաբերյալ մարզպետարանում հրավիրված քննարկումները, կրթամշակութային անցուղարձը,

ինչպես նաև ՀՀ և օտարերկրյա պատվիրակությունների մարզ կատարած աշխատանքային այցերը, մարզպետի հանդիպումները հանրապետական և միջազգային տարբեր կազմակերպությունների կամ նրանց ներկայացուցիչների հետ և այլ բնույթի աշխատանքները:

Հաշվետու ժամանակահատվածում նշված բաժնում համապատասխան նյութերով համալրվել են <<Ելույթներ և հարցազրույցներ>>, <<Ուղերձներ>>, <<Մարզպետի պաշտոնական և աշխատանքային այցեր, ընդունելություններ>> և <<Մարզպետի տեղակալների աշխատանքային գործունեությանը վերաբերող հաղորդագրություններ>> ենթաբաժինները:

## **ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՅՔԷԶԻ ԱՅԼ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ**

Վայոց ձորի մարզպետարանի ինտերնետային կայքի <<Մարզպետարան>> բաժնի <<Մարզխորհրդի նիստերի օրակարգեր>> ենթաբաժնում նախապես տեղադրվել են Վայոց ձորի մարզպետարանի կողմից 2014 թվականին տեղի ունեցած 4 նիստերի օրակարգերը, <<Արձանագրություններ>> ենթաբաժնում՝ տվյալ նիստերի արձանագրությունները, իսկ <<Նորություններ>> բաժնում մեկ շաբաթ առաջ տեղադրվել են նիստերին վերաբերող տեղեկատվությունները՝ նախ՝ օրակարգ, անցկացման ժամ և վայր, իսկ նիստի կայանալուց հետո՝ լուսաբանող տեղեկատվություն:

Վայոց ձորի մարզպետարանի ինտերնետային պաշտոնական կայքի <<Իրավական ակտեր>> բաժնում տեղադրվել են մարզերին վերաբերող ՀՀ Նախագահի հրամանագրերը, ՀՀ կառավարության որոշումները, ՀՀ Վայոց ձորի մարզպետի կողմից ընդունված որոշումները և կարգադրությունները, Մարզպետարան բաժնի <<Հաշվետվություններ>> ենթաբաժնում՝ մարզպետի ընթացիկ տարվա կիսամյակային հաշվետվությունը, համալրվել են <<Բյուջե>> և <<Մշտական գործող հանձնաժողովներ>> ենթաբաժինները:

<<Ծրագրեր>> բաժնի <<Մարզպետարանի աշխատանքային ծրագիր>> ենթաբաժնում՝ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի 2014 թ. աշխատանքային ծրագիրը և Վայոց ձորի մարզի 2011-2014 թվականների սոցիալ տնտեսական զարգացման ծրագրի 2014 թվականի տարեկան աշխատանքային պլանը: Նույն բաժնում բացվել է <<Ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների փոխադրման մրցույթներ և տեղեկատվություն ներմարզային երթուղիների մասին>> և <<Ներդրումային ծրագրերի օրինակելի ձևաչափեր>> ենթաբաժինները և համալրվել համապատասխան նյութերով:

Մարզպետարանի ինտերնետային կայքում տեղադրվել են նաև Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմում, մարզպետարանի ենթակայության հիմնարկ ձեռնարկություններում և մարզի համայնքներում առաջացած թափուր պաշտոններին վերաբերող հայտարարություններ, քաղաքացիների

ընդունելությունների վերաբերյալ տեղեկատվություն՝ ամսական և եռամսյակային կտրվածքով, համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշների, դրանց ծախսային մասերին վերաբերող տվյալներ, հրապարակայնության ենթակա այլ նյութեր:

Ամենօրյա աշխատանք է իրականացվել «Միասնական տեղեկատվական հարթակ» կայք էջում: Իրականացվել է «ԶԼՄ մոնիտորինգ», ԶԼՄ-ներում տեղ գտած հրապարակումների առնչությամբ մարզպետի կամ մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարների կողմից արձագանքման անհրաժեշտություն չի առաջացել:

Տարբեր հիմնախնդիրների վերաբերյալ տրվել են տեղեկատվություններ, հարցազրույցներ:

Մարզպետարանի ինտերնետային կայքի և տպագիր մամուլի միջոցով հրապարակվել են մարզպետի ուղերձները՝ նվիրված տոնական և հիշատակի օրերին: Մարզի կենսագործունեության տարբեր ոլորտներում իրականացված միջոցառումները և հրատապ լուծում պահանջվող հիմնախնդիրների լուծման համար տարվող աշխատանքները լուսաբանելու և հանրությանը պարզաբանումներ տալու նպատակով մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումներից ստացվել են տեղեկություններ և հրապարակել պաշտոնական կայքի բաժիններում և մարզային տպագիր մամուլում: Հանրապետության տպագիր և էլեկտրոնային թերթերը մարզպետի հետ տարվա ընթացքում անցկացրել և տպագրել են հարցազրույցներ՝ մարզում առկա տարբեր հիմնախնդիրների վերաբերյալ:

Վայոց ձորի մարզպետարանի ինտերնետային պաշտոնական կայքի «Համայնքներ» բաժնի «Համայնքի ավագանու որոշումներ» ենթաբաժնում տեղադրվել են բոլոր համայնքների ավագանիների որոշումները, որոնք ներկայացվել են մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժին, լրացվել են նախորդ ժամանակահատվածում եղած բաժինները, ինչպես նաև բացվել է նոր «Ցրտահարության հետևանքով հողի հարկի վճարումների և մինչև 50 տոկոս ռոտզման ջրի վճարի դիմաց փոխհատուցում ստացող շահառուների ցուցակը», «Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը համայնքապետարաններում», «ՀՀ զբոսաշրջային կենտրոններում քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը հաստատելու մասին», «ՀՀ համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման հաստատման որոշում», «ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններին բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական համակարգից տվյալներ տրամադրելու կարգը» ենթաբաժինները և համալրվել նյութերով:

«Հայտարարություններ» բաժնում տեղադրվել են թափուր աշխատատեղերի, այդ պաշտոններն զբաղեցնելու համար իրականացված մրցույթների արդյունքների և նոր նշանակումների վերաբերյալ տեղեկատվություն:

<<Քաղաքացիների ընդունելություն>> բաժնում տեղադրվել են ընդունելության արդյունքները ամսական և եռամսյակային կտրվածքով:  
<<Քննարկումներ>> բաժնում տեղադրվել են ՀՀ օրենքներում փոփոխություններ կատարելու վերաբերյալ քննարկվելիք նախագծեր:

<<Համազգային ծրագրեր>> բաժնում բացվել է նոր՝ <<Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի միջոցառումների ծրագիրը>> և <<Ընտանիքի տարի ծրագիր>> ենթաբաժինները և համալրվել նյութերով:

Բացվել է նոր բաժիններ՝ <<Տուրիզմ>>, <<Հաճախակի տրվող հարցեր>> խորագրերով և համալրվել է համապատասխան նյութերով:

Պարբերաբար թարմացվում են կայքի բաժինների նյութերը:

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 2014 ԹՎԱԿԱՆԻՆ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎՈՂ ԱՍՈՒԼԻՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

2014 թվականին ՀՀ Վայոց ձորի մարզպետն իր գործունեության արդյունքների մասին հաղորդմամբ 2 անգամ հանդես է եկել մամուլի ասուլիսով՝ 06.05.2014 թվականին՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի նիստերի դահլիճում, 14. 08.2014 թվականին՝ Երևանի <<Զարկերակ>> ակումբում:

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ԶԼՄ-ների և հասարակական կազմակերպությունների կողմից Վայոց ձորի մարզպետարանին արվել է 2 տեղեկատվական հարցում, որին պատասխան է տրվել օրենքով սահմանված ժամկետում:

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԵՐԻ ՀԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Մարզի համայնքներում հիմնականում առկա ցուցատախտակներ, որոնց վրա տեղադրվում են համայնքի ղեկավարի որոշումները, ավագանու նիստերի օրակարգերը, կայացրած որոշումները:

Մարզպետարանի պաշտոնական կայքի <<Հղումներ>> բաժնում ավելացվել են հղումներ Մալիշկա, Արենի, Զառիթափ, Խաչիկ, Շատին, Վերնաշեն համայնքների համայնքային կայքերի հասցեներին:

Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին